

ժպտուն դէմքերուն ետին պահ-
ուած ոգին, որ երկուրդի ոգին է
եկեղ թաղած Օսմ. խորհրդարա-
նի նախագահական աթոռին վը-
րայ. եւ զուր տեղը չէր որ Հա-
միտը և Ռիզան համարուեցան
իրարու հետ, համաձայնութիւնը
կատարեալ էր իրենց մէջ. հին
Բէթիմը շարունակել Սահմանա-
դրական դիմակ մը անցնելով ա-
նոր երեսը. եւ այդ մենք կան-
խատեսած էինք տարիներ առաջ,
ըսելով թէ Ահմետ Ռիզան Սուլ-
թան Համիտին հայալինը քաղա-
քականութիւնը եւրոպայի առ-
ջե արդարացնելու պաշտօն ունե-
ցող մէկ գործակալը ըլլալ կը
թուի Այն ատեն մեր այս խոս-
քը սաստկապէս ազգած էր Ահ-
մետ Ռիզայի վրայ, որ իր Մէլ-
վէրէթերին մէջ «Վառնայի
Իրաւունքը մեզ դէմ կը հայհոյէ
կոր» ըսած ու վերջացուցած էր
մեր իր հետ սկսած վիճաբանու-
թիւնը խոյս տալով մեր տրա-
մաբանական փաստերուն առջե-
ւէն. Այսօր կը ցաւինք որ
տարիներ առաջ մեր ըսածը եկաւ
գործնականապէս հաստատուե-
ցաւ. Այլեւ Համիտը և Ռիզան գը-
լուի գլխու կը խորհրդակցին ու
կը գործեն սահմանադրական
դիմակով. Վայ խաբուողին...

Մեր Ազգ. Երեսփ. Ժողովը,
թէ ևս մեծի մասին լաւագոյն
տարբերէ բաղկացած, ոչ ինչ ըրաւ
տակաւին Ազգին իրական վէր-
քերը բռնելու տեսակետով. Մի-
ակ քայլը՝ որ առաւ պատուիրա-
կութեան մը միջոցաւ հայկական
նահանգները քննիչ-բարեկար-
գիչ յանձնախումբ մը զրկել տա-
լու համար, ծափելի էր իր սկզբ-
նաւորութեան մէջ, բայց պէտք
եղածին պէս չը հետապնդուելով
այդ ալ վիժեցաւ. Գաղթականաց
հայրենիք վերադարձին ուժ
տալ ուղղուեցաւ, բայց այդ նպա-
տակաւ պատրիարքարան հասած
նպատենքուն մեծագոյն մասը
Պոլսոյ մէջ խմբուած կարգ մը
աներեսներու որկորը պարարտա-
ցնելու յատկացուեցաւ. գընուե-
ցան երեսփոխաններ ալ որոնք
հանդիսաւորապէս ուժ տուին այդ
աներեսներուն շահատակութեանց,
մինչև որ անոնք Պատրիարք
Սրբազանի վրայ խուժել յանդգ-
նեցան լրբօրէն, մինչ անդին Չէյ-
թուրը և Բաղէչը նպաստէ զուրկ
մնացին ընդ երկար. եւ այս նը-
պատի սխալ ձեւը և հայաբնակ
գաւառներուն մէջ ապահովութեան
պահպան պատճառ եղան որ ար-
տագաղթի հսկայ հոսանք մը
սկսի ու շարունակուի.

Մեր Ազգ. Ժողովը զբաղուած է,
չատ մը լուծելի խնդիրներ ունի
իր սեղանին վրայ, բայց ամէն
նիստի ժամերով կը զբաղի մե-
ծամասնութեան խնդրով, որ չի

լուծուիր եւ միշտ առկա կը մը-
նայ. Օսմ. խորհրդարանին յիշա-
տակաբիւր մը մատուցանելու ա-
ռաջարկը զոր Համիտի Սրբազան
մէկու կէս ամիս առաջ բերաւ
Ժողովին, խորհրդակցութեան
չառնուիր տակաւին և նիստէ
նիստ կը յետաձգուի. Այս առա-
ջարկին ստիպողական կարևորու-
թիւնը երբ ամէն ոք կը խոս-
տովանի, ինչ բան կը հարկադրէ
Ժողովը զայն ամէն անգամ յե-
տաձգելու. Վերջին նիստին Հը-
մայեակ Սրբազանը վերստին յի-
շեցուց իր այդ առաջարկը, բայց
նորէն արձագանք չը գտաւ ա-
նոր փութացումը. երբ մեր Ազգ.
Ժողովը ու Պատրիարքարանը
այսչափ թույլ կը գտնուին ազգին
իրաւունքները պահանջելու մա-
սին, բնականաբար կառավարու-
թիւնն ալ աւելի թույլ պիտի գըտ-
նուի և գաւառներուն ողբալի վի-
ճակը պիտի շարունակուի գեռ-
երկար ատեն. Խոստացուած ըն-
նիչ յանձնախումբին նախագահ
նշանակուած է Հայերը ջարդել
տուող Շաքիր փաշայի ընկերա-
ցած սրիկայ մը. Այլ կը հասկըց-
ուի թէ ինչ կըլլայ այդ յանձ-
նախումբին արդիւնքը. Պետա-
կան գանձէն հայկական գաւառ-
ներուն նպաստ բաժնելու խոստու-
մը ցարդ խոստում կը մնայ եւ
անդին ձմեռը ու սովը իրենց
աւերը կը գործեն. Եւ գաւառ-
ներուն այս ողբալի վիճակին շա-
րունակութեան հանդէպ մեր
Ազգ. երեսփոխանները գաւառնա-
նահանգները Աւետիս Սուրենեան
մը անպարտ հռչակելու և Օր-
մանեանը՝ քննախնդիր ոգով մը
անպատճառ դատապարտելու ան
կարևոր խնդիրներով զբաղել կը
սիրեն.

Ահա ձեզ Սահմանադրութիւն.
ահա ձեզ Հաւասարութիւն.
Յ. Գոռպէք

Ի Ր Ա Ի Ո Ի Ն Ք

ՈՒ

Ոչ էջ ազգի բաղդիքը կը պարու-
նակէ մի այնպիսի բոս որ իր մէջ
պարուրէ, որ հոմանիշ ըլլայ խորհուր-
դին ի գոյ ածելու.

Հայերէն լեզուն ունի այդ չքնազ
բառը — Երկինք եւ երկիր —

Հայաստանի հարկոյն ունի իր եր-
կինքը, այսինքն խորհուրդներ երկ-
նելու այն հիւանայի կլիպան, նոյն պէս
Հայաստան ունի իր առողջ բերրի եւ
յուռթի երկիրը, որ այդ խորհուրդները
երկնելու, ի գոյ ածելու հիւանայի մի-
ջովայրն է. ուրիշ Հայոց երկինքը
եւ երկիրը հոմանիշն խորհուրդ եւ
երկնելու սոյն բառերուն ստուգաբա-
նութեամբ.

Օսմանեան կառավարութիւնն ի
հարկէ պարտաւորութիւն ունի Հայ
Ժողովուրդին լիութիւն զիւրութիւնն եր-
ընծայել. նման ճաշարտութեան բժիշ-
կի մը որ նոր ապաքինութիւն գտնող
հիւանդի մը կաղզուրիչ զօգքը կը մա-

տակարէ, բայց ժողովուրդն ալ իր
կարգին մեծ եւ աննահանջի պարտա-
կանութիւններ ունի այդ երկինքն ոգ-
տուելու հետզհետէ կաղզուրուելու եւ
իր բաժնին ինկածն ի գործ գնելու
կէտին մէջ.

Սահմանադրութիւնն առաջ ժող-
ովուրդը մինչեւ մէկ աստիճան կրնար
զինքը չքնազանքն պատրուակ ընեն
լով կեցած ընտրելու հազար ու մէկ գըթ-
ուարութիւններն ու հաւանքները
բայց այսօր հիմնադրական տապա-
լած է հինն ու նոր ընտրելու յաջորդած
երբ ամէն ոք ազատ է իր ձեռքէն եւ
կարծիքով զար մը զետեղել մեծ չէն
քին. իմա հոյակապ հայրենիք մը վե-
րստեղծելու եւ եղածը մեծցնելու
ստորագրանելու, որուն մեծութենէն
ամեն ցեղ եւ ամեն ոք իր բաժնին
պիտի ունենայ. Սահմանադրութիւնը է ան-
ներելի յանցանք է երբ մեր թանկ ժա-
միրը զեղխութեամբ չուարտութեամբ
զուարճութիւն անցունենք ինչպէս որ
անցուցինք Սէվաստաբոլի պատերազմէն
անցին բազում տարիներ.

Ժամանակ է գործելու այժմ առտուել
քան երբէք, այլապէս մեծ վտանգ
կայ մեր առջեւ պատրաստ.
Ուրիշ ժողովուրդներ, Ազատութեան
բարբէնէն ինչ լիութեան վարսախ
փարսախ առաջ պիտի անցնին. իսկ
եթէ մենք չպատկո՞ղենք զոհացնելու
նպատակաւ տղայական վէճերով կ'ան-
ցունենք մեր օրերը 8-10 տարի յետոյ
պիտի տեսնենք որ շատուշատ յետ մն-
ացեր ենք եւ այսօրուան մեզի հաւա-
սար կամ քիչ մը բարձր զիրք ունեցող
միւս ժողովուրդներն նկայաբայտ առ-
աջ անցեր են թողով զմեզ արհա-
մարհելի գրութեան մէջ.

Հայ ժողովուրդին նիւթական վիճա-
կը առաւել կամ նուազ ապահովել
յետոյ մեր սպիւն իբրեւ կուրք պիտի
կանգնի անոր մտաւորական վիճակին
գոհացում տալու խնդրի.

Նախորդ յօդուածներով առաջ բերեք
էինք Հայ մամուլը եւ բեմի պարտակա-
կանութիւնը ի մասին կրթական գոր-
ծերուն. նոյնպէս պէտքը շեշտել էինք
Հայ ազգեան կաճառի մը հաստատման.

Ուժ պէտք է յանձնել այս մեծ եւ
հոյակապ ձեռնարկին հեղինակութիւնն
եւ զեկաւարտութիւնը.

Ուժ պէտք է յանձնել այնպիսի կեն-
սական գործ մը որուն մէջ զբաւի
վստահութեան խնդիր կայ անստորա-
վարք բարքի խնդիր կայ.

Ուժ պէտք է յանձնել այնպիսի
ձեռնարկ մը որ Արարատի արեւելեան
եւ արեւմտեան երկու կողմերուն վրա-
տահութիւնը, սէրը եւ համակրութիւնը
լիութիւն վայելող պարկեշտ անձ մը լի-
նի, ոչ ալ ոք բայց եթէ Ամենապատիւ
Տ. Մատթէոս Ս. Արքեպիսկոպոս իզ-
միրեան.

Այս խղճամիտ, պարկեշտ եւ օրինա-
պահ ա՛ճը ընդհանուր ժողովուրդին
համակրանքը կը վայել. հետեւաբար
կոչում կընենք իր ազգասիրութեան
որ սոյն ձեռնարկին զեկաւարտութիւնն
ստանձնէ եւ պատմութեան մէջ բազ-
ցր յիշատակ մը թողու.

Հայկազեան կաճառն ի գոյ ածելու
հաւար ի հարկէ գրաւի պէտքն ա հը.
րաժիշտ է, բայց երկաթէ պատրիարքը
զբաւի կուրքին առջեւ չընկրկուի ա-
պագային նա կարող է նուիրատուու-
թիւններ կտակներ բերել թափել կա-
ճարի սնտուկին մէջ, բայց առ այժմ
Հայոց Ակադէմիան հաստատուելու հա-
մար կարող է ա կերպ վիճակահա-
նութիւն մը մտքմաւորել, զոր առ ի
նկատառութիւն եւ իր նման մէջ կը
բերենք ստանալու.

Վիճակահանութիւն ի նպաստ Հայ
կազեան կաճառի.

500,000	ժողովուրդ հատը	5722	2,500000	զր
Վաստկող	1337	թիւեր	որք	են
1	Մ3	1	բաժին	100000 է 100,000
2	«	1	«	50000 « 500000
3-7	«	5	«	25000 « 125,000
8-17	«	10	«	10000 « 100,000
18-37	«	20	«	50000 « 100000
38-137	«	100	«	1000 « 100000
138	337	«	200	« 500 « 100000
338-1337	«	1000	«	100 « 100000
		1337	բաժին	775000

Տպագրութեան փոստի
եւ այլ ծախքեր
ապտ գանձելի զրչ. 105060
Գոյացեալ զուտ
արդիւնք 1620000 զր
2500000

Ինչպէս վերեւ կը տեսուի զանազանաց
տրուելիք 7000 ոսկի պարգեւներէ զառ
1620000 զրչ. կամ մերձաւորապէս
15000 օսմ ոսկի զուտ արդիւնք մը
պիտի գուրս գայ, ուսկից կարելի է
առայթմ համեստ վիճակի մէջ Հայկազ-
եան կաճառ մը կազմել բովանդակ
ազգին մէջ գտնուող բոլոր մտաւոր եւ
գրչի վաստակաւորներն ընտրաքօն հոն
հրաւիրել երեսուն վեց անդամներէ
բաղկացնել.

Ասոնց վրայ կարելի է աւելցնել
պատուոյ անդամներ եւ թեկնածու ան-
գամներ իրենց նուէրներուն եւ իրենց
աշխատութեանց փոխարէն.
Հայկազեան կաճառն ունենալիք
աշխատութեանց մասին մեր ժիւ յօդ
ուածով արդէն մատնանշած ենք.
հարկին նորէն կարգադրանալով
Իզմիրեան Արքեպիսկոպոսի կոթո-
ղը կը լինի այս կաճառը.
«Գործը գործողին» կըսէ առակը.
Հրատուեն

ՅՈՒՆՈՒՆԱՆ
ՄԻՄԱՍՈՒԹԻՒՆՔ

Յոյնը խոնարհութեան գեղեցիկ
յակութիւն մը ունի. մեծ շէնքի
մը դռնէն ներս մտած միջոցին գլուխը
կը խոնարհեցնէ որպէս զի կամարն
չի զարնուի.

Ողբացեալ նահատակ Թատրոնի
զագաղը Պերա վար գրուելով յոշտեալ
մարմնոյն լուսանկարն հանուեցաւ.
Ամեն կողմէ բացազանչութիւն.

— Այս է Սահմանադրութիւնը.
Միւր թիւերը կը պատասխանեն
— Բայց ձեզ ո՞վ ըսաւ թէ մեր իս-
լամ կանանց հետ կարող էք յա-
րաբերութիւններ մշակել մեր քիթին
տակը.

Որոշուեցաւ արձան կանգնել զեմ-
նիդի գուլուի այս հերոսին վրէժն
շղթայ մը անցուած.

Գանտիաէ հեռագիր
Կզգին Ազգ. Ժողովը հռչակեց թէ
կրէտէ միացած է Օսմանական, Յու-
նաստան հեռագրեց թէ ինք իւրաքա-
նուսն այս միացումէն եւ թէ գիշեր
ատեն եկեր միացեր է յանկարծակի.

Յունաց պատրիարքարանը չիջարեա

բական կոնգրեսներ հրատարակեց պատ-
ուիրելով որ Հայերը ազէկ վարուին
Թոյներուն հետ

Թոսորիի սպանման հետեւանօր Թոյ-
ները մեծ քանակով ատրճանակ կը
գնեն, պալատը մեծ մտահոգութիւն
մէջ է

Թաղաւորը վիեննա գնաց Թրանց
նօգէֆ կայսրէն խնդրելու որ կրէտէի
Թունառանի հետ միացումն յետագա-
ուի

Լէնկթմուր Սերաստիան պաշարած
ատեն հրացաւ նետաձիգ Հայոց ճար-
պիկութեան եւ բացազանցեց . . .

— Հայերն ինչ հիանալի նետաձիգ-
ներ են, այսինքն, Նէ՛՝ Եման օքճի
տիրէր էրմէնիէր —
Հոռոմները Մանկօ կայսեր սոյն
գնահատուէն նախանձող վառելով,
իրենի իրենցմէ տառ մ'ալ բարդելով
Օքճին եղաւ Պօքճի, Հոռոմներուն այս
լորճունքը հինգ հարիւր տարուան
հնութիւն մ'ունի

Պարիզէ քաշուած հեռագիր մը կը
ժանուցանէ թէ Հիլլէն գնապանը շատ
հաւանք է գնապանախորհրդոյ ծրարին
եւ կարծիք յայտնելու որ Թունաս-
տանի եւ կրէտէի մէջ լաւ ընդունելու-
թիւն մը պիտի գտնէ այդ ծրագրերը . . .

Հոռոմներուն պաշտօնաթերթը «Պրօ-
տոս» կըսէ. — Երեսօրեայ Թերթերը ի-
րենց յաջողութեան մեծ մասը Թոյնե-
րուն կը պարտին —
«Երկար ըրիք էֆէնթիմ» կըսէ
Թերթը Թերթը

Թաղիս

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Աղքատներու եւ սովելաններու
համար գաւառները զրկուած նը-
պատներու գումարները կառավա-
րութիւնը ինք կը գրաւէ եղեր
տուրքերու ի հաշիւ: Ահա ձեզի
սահմանադրական կառավարու-
թիւն մը որ սովելոց չօգնելէ զատ
անոնց զրկուած հացագինն ալ
կը յափշտակէ: Այս տխուր լուրը
կը հաստատեն Տիվրիկէն, Մուշէն
եւ Եօլքատէն պատրիարքարան
հասնող հեռագիրներու:

— Երկրիկոյ հանգուցեալ Մը-
կրտիչ կաթողիկոսին ժառան-
գորդները ասկէ առաջ 500 ոսկի
մը իւրացնելէ զատ հիմակ ալ
հանգուցելոյն կալուածներուն ալ
տիրանալ սկսած են դատական
միջոցներով: Պատրիարքարանը
նախարարութեան միջոցաւ յա-
ջողած է արգելել տալ փոխան-
ցումի գործողութիւնը, որովհե-
տեւ հանգուցեալ կաթողիկոսը
«Նէֆի միւլըր» պաշտօնաթուղթ
ունէր, որով իր հարստութիւնը
Աթուին պէտքէ մնայ:

— Նախորդ ընթերցի ատեն
գործէ զրկուած Հայ բռնակիր-
ներէն մաս մը Ղալաթիոյ քա-

րափի գործերուն ընդունելու
համար պատրիարքարանէն գի-
մում եղածէ վաղջութեան որ
խոստացած է զաւ կարելոյն գո-
հացում տալ:

— Երեսօրեայ վառքին խոն-
դրները շքեղութեամբ պաշտօնով
կաղմուած են զքանակաւ զարդ-
կաւորճէն արքայաւոր ամբաստան-
եալ Պէրդէ կայսրէի և Նի-
ոնի վ. վառքի թերթին միջոցաւ
քննութիւնները պարտիչ:

— Վառքի մօտ նախկին վառքին
հսկայ լաւագոյնութիւնը փլած
եւ Յ հոգի տակը անուած են:

— Տէսթունի շոգենաւային
ընկերութիւնը արեւմտաւոր
յանձն առած է Հայ դաղթական-
ները ձրիաւոր փոխադրել Պոլի-
սէն Սէ մօլու նաւահանգիստնե-
րը:

— Լուսաֆէրէն կը տեղեկանանք
թէ Պողոս փաշա Նուպար Եւրոպ-
այէ Եզիպտոս վերադարձած ըլ-
լալով, որոշած է մեծ հանգանա-
կութեան մը ձեւնարկել ի նը-
պատ Հայաստանի մեր թշուա-
նեղայրներուն:

— Հայ Սահմ. Ռադ. Կուսակ-
ցութեան Աղէքսանդրիոյ և Գահի-
րէի Ակումբներուն կողմէ Օսմ.
խորհրդարանին բացումը շնոր-
հաւորող հերազիր մը տրուած
ըլլալով առթիւ իր իրիւրեան
Պատրիարք հեռագրած է Եզիպ-
տոսի Առաջնորդին որ իր գործէ
շնորհակալութիւն յայտնէ և իր
գոհունակութիւնը և օրհնութիւն-
ները հաղորդէ նոյն կուսակ-
ցութեան եզիպտացական անդամ-
ներուն:

— Հ. Սահմ. Ռադ. Կուսակցու-
թեան Աղէքսանդրիոյ Ակումբին
Դիւանը կապուած է հեղեւեպ-
ներէ:

Տ. Տ. Կառնիկ Զուպուքեան
Տըք. Վիսկոնչեան, Մկրտիչեան
Մ. Տամատեան, Յ. Փափազեան,
Ե. Փափազեան և Ազ. Այվազեան:

ՊՈԼՍԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ

ՊԵՏՈՒՄԱՆ ԾԱՆՈՒԹՅՈՒՆ

Վերջնականապէս յայտարարեց ի
գիտութիւն Հայ ժողովրդին որ այ-
սօրուրէն սկսեալ Թուրքիոյ ներքին
նահանգներէն Հայաստանէն եւ ար-
տասահմանէն Կ. Պոլսի եկող ազգայն-
ներն ո՛րեք պարագայի առկ չեն կը-
նար իբր գաղթական: Նկատելի է
Գաղթականաց Թանգարանին անոնց
որեւ իցէ նպաստ կամ ճանապարհա-
ծախս տալու պարտականութիւն յան-
ձն չառնելու Բոլոր այն Հայերը, առ-
անց դաւանանքի խտրութեան, որոնք
Կ. Պոլսի կուգան պէտք է վաղձօք
իրենց ապրումնով միջոցներն ապահո-
վեն ու տեղի տան չը գնեն Գաղթակա-
նաց Թանգարանի վրայ: Միանգա-
յիս միշտ գիտնալով թէ գաղթական-
ները արտակարգ անպարտ զոտարը
սպառած է եւ Թանգարանի քանակ
փինակի չէ բաւարարութիւն ձալ-
անգործ եւ անապատան աղքատի
այս կամ այն պահանջներ:

Թուրքիոյ եւ արտասահմանի ազգա-
յին վարչութեանց եւ պաշտօնական
մարմիններու լուրջ ուշադրութիւնը
կը հրաւիրենք ներկայ յայտարարու-
թեան վրայ:

Իսկ Կ. Պոլսոյ մէջ գտնուող գաղ-
թականներէն բոլոր տեսք ուր մինչեւ
յառաջիկայ նոր տարի իրենց հայրե-
նիքն են վերադառնալ. այդպիսինքն
պարտաւոր են իրենց համար գործ եւ
կայսրան ճարել ու իսկոյն հեռանալ
Ազգ. Պատրիարքարանէն, Բերայի եւ
Բալթիկի Ս. Եկեղեցեաց շրջափակ-
ներէն, ու այլեւս չը իմեն Թանգար-
անի վրէժն որեւէ պահանջով:

Տօներէն յետոյ հացին բաշխումն
ալ կանգ պիտի առնէ եւ Գաղթակա-
նաց Թանգարանը վրէժն հարկա-
գրուի զտրեցնել իր գործառնութիւն-
ները:

Ի դիմաց Գաղթականաց Թանգար-
անի:

Ատենապար
ՊՈԼՍԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ
1908 Դեկտ. 19

ՍՈՒԼՈՒՆԸ ԵՒ ԵՐԵՍՓՈՒՆՆԵՐԸ

Օսմ. Երեսօրեայներուն Երեւոյ
մէջ արուած հացկերոյթին Սուլթանը
իր կողմէ պատրաստուած հետեւեալ
ճառը կարդալ տուած է. քաջազար
ձէվատ պէյն:

«Տեախ Երեսօրեայն,
«Բարձեալն Աստուած ձեր թիւն ու
«Երջանկութիւնն աւելցնէ, Իրապէս եւ
«Ամեծ ապէս զոհ եմ որ այս իրիկուն
«Կ'ճաշիմ Օսմանեան Ազգին. հպատա-
«կներու փոխանորդներուն, այսինքն
«Ամբողջ Ազգիս հետ: Այնպէս կը կար-
«ձեմ որ այսպիսի իրիկուն մը տալին
«Անգամ է որ կը պատահի Օսմ. Տէրու-
«թեան Պատմութեան մէջ, եւ Բարե-
«բաւտիկ զէպք մը է անկաւ Ասոր
«համար կը յայտնեմ շնորհաւորութիւն
«ձերս, եւ կ'մաղթեմ որ բարեբախտու-
«թիւնն աւելանայ այսպիսի գեա շատ
«պատեհութիւններ չվայելելու: Այս
«Երջանկ համախմբումն խնդրեմ ու
«Պապացոյցն է մեր Սահմանադրութեան
«ձայնգեղած եւ Լստուծով տակաւին
«պարգեւելիք բարգաւաճութեան
«մեր Տէրութեան, Ազգին եւ Հայրենի-
«քին:

«Տեախ Երեսօրեայն,
«Յայտնի ըլլայ նաեւ որ Կայ-
«սրապետն, Տեախեան եւ երկրին
«Երեսօրեայ պահապանը Լաիս Աստուած
«ձեռ յեռ Սղոմ ու Երեսօրեայն
«Ժողովն են: Ուստի ձեր պարտաւո-
«րութիւնը թէ կարեւոր եւ թէ նուիրա-
«կան է: Բացարձակապէս կը պահան-
«ջեմ որ ձեր ջանքը, եռանդը եւ նպա-
«տակներն այս կարեւոր եւ նուիրական
«գործն ի գլուխ հանելու ձգտին
«միայն: Այս նուիրական իրաւունք-
«ները բովանդակող մեր Սահման-
«ադրութեան տրամադրութիւնները պի-
«տի պահեմ շնորհիւ Ամենակարողին,
«եւ իմ կեանքս սօսք նուիրած եմ,
«եւ ո՛չ ոք հակառակ կ'կենայ եւ ո՛վ
«ոք տը ըլլայ այն, եւ պիտի ըլլամ
«անոր առաջին թշնամին, անոր առա-
«ջին հակառակորդը, իբր Մարգարէի
«Փոխանորդ եւ իբր Ձեր Թագաւորը
«Ասիկա կը հաւաստեմ Ձեզ եւ կը
«Կրկնեմ իմ այս յայտարարութիւնս:
«Բարձեալն Աստուած Ձեզ ըլլայ
«ճօժանդակ, մեր Տէրութեան, Ազգին
«ու նուիրական Հայրենիքին համար
«Ձեր թափելիք ջանքերուն»

Կայսեր այս ճառը, զոր ձիվատ պէյ
կարդաց բամբ ձայնով մը, ամենա-
խանդավառ ծափերով ողջունեցաւ:
«Կեցցէ՛՛ Կայսրը» աղաղակները կը կը-
կնուէին շարունակ եւ նոյն իսկ երե-
կոսաններ ոտքով գետինը կը ծծէին:
Ամէնէն ծանրագուլի կրօնաւորներն

Իսկ իրենք իրենցով կը շարունակ
կը ծափէին եւ գետինը կը ծծէին: Պա-
կաղաղակէին: Երեսօրեայն նաեւ
էն աւելի յուզող խանդավառող եւ
խելայեղող իրողութիւնն էր Կայսեր
այն յայտարարութիւնը թէ «ԿԱՅՍՐ-
ՈՒԹԵԱՆ, ՏԵՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԵՐԱՐԻՆ
ԻՐԱՒԱՆՑ ՊԱՀԱՊՈՆՆ ԱՌԱՋ ԱՍՏ-
ՈՒՄԸ, ՎԵՐՋԸ ԱԶԳՆ ՈՒ ԵՐԵՍՓ.
ԺՈՂՈՎՆ ԵՆ»:

Երեսօրեայն խանդավառութիւնն
ու կեցցէններէն Սուլթանը յուզուած
քանի մը անգամ խոնարհեցաւ ու բո-
րեւեց եւ աչքերը արցունքով լեցուե-
ցան եւ ձեռքերով սրբեց արցունքը
ու ըսաւ, «Երեսօրեայն եմ շնորհակալ
եմ» եւ տեղը նստելէ յետոյ Ահմա-
Րիզա պէյի դառնալով ըսաւ, «Երես-
չեմ ինչ որ կեանքս մէջ այնչափ
երջանիկ վայրկեան մը անցուցած
ըլլամ»:

Սուլթանը լաւ դերասան մը ըլլալ
կը թուի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԷՆ

ՎԱՆՑ մէջ աստիկ ձմեռ կ'ընէ
Նոյնիսի սկիզբէն ի վեր: Զառնազան
հիւանդութիւններ ճարակած են, մա-
նաւոր ժանտախտը, որուն զանա-
ցած է գերման Որբանոցին Տնօրէնու-
հի ըրոյ Աննա Գեմալեան: Թորե-
նին գինը 55—65 դրչ: Վառքիք եւ
ու տեղիքի աղութեան շատիկը շեղուի
աղքատները: Աննա տառաւորը լաւ
էր: Անկէ ի վեր գործերը վաղեմ
են ճամբաներու անհանգիստ գէշութեան
երեւել: Թղթատարութիւնն Կրճիկ ա-
ւելի անկարգ եւ անկանոն է: Գրե-
նի մէջին օրով, Թղթատարական փո-
խադրութեան վարձակաւները վաճա-
ր եւ վատոյժ կեդանիները կըրանցնեն
աժնութեան համար, եւ սուրհանգող-
ները միշտ ուշ կուգան վաճառ:

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԼՈՒՐԵՐ

— Տիվրիի հոնգանակիչ Մա-
նաթողը ի նպատ Թուրքիոյ
Հայաստանի Հայ տառապեալնե-
րուն որոշեց 3000 ֆր. շրկե-
լով իրեն Կատարարին: Նոյն
Մասնաժողովը յուզուած Պատրի-
արք Հօր օգնութեան կողմէն
մեծ հոգածութիւն ցոյց պիտի
տայ հանգանակութեան գործին:

— Ռուսիոյ Պետ Տոմայի մէջ
Պուրիշկէվիչ անունով յետադիմա-
կան երեսփոխան մը իր կարգի շար-
ցապնդումով մը լծանք ամբաս-
տանութիւններ ըրած է Կովկասի
Հայոց և Վրաց գէմ: Նա ըսած է
թէ Հայերը Մեծ-Հայաստանի
քաղաք մը կալմած են մինչեւ
Վորոնէժի նահանգը, բայց այդ-
քաղաքը ինք չէ տեսնել ինչ
մեծաւ հոգաբարձու Եանուսիկին
տեսնել է (!): Հայ ընկերու-
թիւնները ահագին գումարներ
կը հաւաքեն եղեր այդ մեծ Հա-
յաստանը կաղմելու նպատակաւ:
Նոյնպէս Վրացիները ինքիւսանու-
թիւն կուզեն եղեր Կովկասի մէջ
Ռուսաստանի բարեկամները միայն
մահմադականներն են եղեր (Մար-
դը պատմութիւնն ալ չի յիշեր):
Կը յաւելու թէ Կովկասի փոխար-
քան արդէն զառամած չըլլապատ-
սած էն կաշառակերներով:
Բայց քանի մը օր առաջ փո-

